808
3-70

2655-42

808
Հ-

ԱՌԱՋԵՌՆ

# ՐԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱՌՕՏԵԱԼ

Ի Հ. ԵԴՈՒԱՐԴԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԷ

ՀԻՒՐՄԻՒԶԵԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

1001
2210



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՍՈՒՐԲՆ ՂԱԶԱՐ

—

1839

# ԱՌԱՋԵՌՆ

# ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

## ԴԱՍ Ա

*Ընդհանուր տեղեկութիւն զտաղաչափութեանէ. — Կազմութիւն չափուց ոտից։*

Հ. Ո՞ՐՆՉ է տաղաչափութիւն.

Պ. Բան բաղկացեալ չափմամբ ոտից կամ վանկից։

Հ. Ա՛ռ ինչ հնարեցաւ այս.

Պ. Յօժանդակութիւն խանդից քերթողին։

Հ. Արդեօք լեզուն քերթողական 'ի չափ ոտից ևեթ կատարի.

Պ. Ոչ. այլ այնչափ այլ ևս խորութիւնք են ընդ չափեալ և ընդ արձակ բան ըստ դլխաւոր հանդամանաց լեզուին, ըստ հոլովոց, ըստ բայիցն խոնարհմանց, ըստ խընդրառութեանց, ըստ համաձայնութեան, և ըստ բառից ազատութեան, մինչև ըստ

նիւթականին և սկզմութեան զանազանել ամենևին քերթողական լեզուի 'ի Ճարտասանականէն։ Զոր օրինակ զդիմելոյ զօրացն քրիստոնէից յարևելս մարթի Ճարտասանին ասել. Զան սրտմտեալ բարկութեամբ հանգոյն կուտակելոց ալեաց ծովու, բազմութիւն յոյժ որպէս զաւազ առափն ծովու, և որպէս զասաեղս երկնից բազմութեամբ. և ծածկեն զերեսս երկրի որպէս զձիւն սպիտակ իբրև զասր։ Բայց Ընորհալին զսոյն զայս բացատրէ այսպէս.

«Իբր ըզծովու ալեայ կուտակ
Բորբոքելով զան խիստ ու բարկ.
Ընդ ան ծովու աւազի գունակ,
Կամ զերդ աստեղս երկնից 'ի կարգ.
Լ ընուն զամէն երկրի ատակ,
Որպէս ըզձիւն ասրաքատակ»։

Հ. Որպէս կազմի չափ ոտիցն կամ վանկից.

Պ. Ընդամատութեամբ, այսինքն բաժանեալ թուով զանդամս, ուր շեշտքն անկանին։ Ոչ քանզի առ մեզ սովորաբար 'ի վերջս բառից կայ շեշտն, անդ հատանի և անդամն, զի շեշտն ըստ կարգի պատահեսցէ. ուստի անդամքն վասն շեշտին են, և շեշտիւն բաժանին. զոր օրինակ

«Զի է պարծանք ըստոյգ, և թագ արքունական,

Որպէս գրրէ Պօղոս, անօթն այն ընտ-
րութեան.

Տիմոթէոս որդեակ, լեցիս 'ի խրա-
խութեան,

Ընդամօթ քարոզ խաչին վրկայութեան»։

Յորս, որպէս տեսանի, շեշտն է որ
յարմարէ զիմաստսն և զչափս, կալով 'ի
վերջ այնպիսի բառի՝ որ հարկաւ կապակ-
ցեալ է ընդ յաջորդին, և աքանչելի փո-
փոխութիւն ածէ 'ի տողսն, քան զոր չիք
ինչ կարևոր առ 'ի զուարճացուցանել։
Այսն որոյ որչափ ըստ բնական շեշտիցն
հատուածեալ իցեն անդամքն, այնչափ
քաղցր և բնական լինի կազմած տողին,
և յայսմ է ճարտարութիւն տաղաչափին, և
այսմ ուշ ունին քաջ քերթողք մեր հինք և
արդիք. թէպէտ և մարթի լինել ուրեք
ուրեք աղաստութիւն ինչ կամ համարձա-
կութիւն որպէս և յայլ լեզուս։

Սովին օրինակաւ պարզին և իմաստք
բազում տողից, զորս ըստ բառիցն շարա-
կարգութեան մարթ էր յայլևայլ միտս առ-
նուլ։ Օրինակ իմն յընթեռնուլ ուրուք

«Այսօր անճառ լուսոյն ծագումն...

Գրլխոյն ընտրեալ հօտին փոքու»...

ոչ ինչ տարակուսեալ երկմտեսցի՝ զի ան-
ճառ ածական է լուսոյն, և ոչ ծագման. և
ընտրեալ ածական է հօտին, և ոչ գլխոյն։

Հ. Ապա ուրեմն բառք յարաշեշտք և նախայարաշեշտք, որոց շեշտք ոչ'ի վերջ բառիցն անկանին, չմարթին կազմել անդամս.

Պ. Կազմեն իսկ, այլ զմասն մնացեալ դկնի շեշտին՝ տալով յաջորդ անդամոյն. զորօրինակ առնէ Շնորհալին

«Որպէս և յայնժամ ըզնոսին ։
Վարեն մինչ յայնկոյս անբընակ ։
Որպէս և անդանօր տեսեր » ։

Վերջինս այս, և հանդոյն սորին կատարեալ ածանցք, քանզի և'ի վերջին վանկըն շեշտին հանդատեամբն, յաճախ ևս անդ գործեն զանդամ։ Բայց ընդ յարաշեշտ և ընդ նախայարաշեշտ բառս նկատելի են ամենայն սերտ կցորդութիւնք բառիցն ընդ միմեանս՝ որք շեշտիւ միշտ կցորդին. զոր օրինակ Հայր մեր, ըՀայրն մեր. դիմեալ գան, այսոր գան, ինքպէս ես, ոչ երթէ, ձեզ պամ, յանձն առնեմ, և ն. վասն որոյ խորթ և անարուեստ կազմի տող՝ որոյ անդամք'ի վերջն անկանիցին փոխանակ'ի շեշտն անկանելոյ բառիցս յայնժամ, յայնկոյս, ի-բաթանչիր ոտ, ի-այլ պաշ, պեղի պաշ, մի լինիր, ուլգիպէս, բաղում անգամ, և ն։ Վասն որոյ ասելի է ըստ Շնորհալւոյն.

«Տարրքն տեղի տայր և լքուէր ։
Ոչ և բաղում անդամ ջանայ ։

Զի յորժամ ոչ գիտես, կոչիս։
Զարեայքն մի լինիր նըման։
Իւրաքանչիւր ոք ըստ կարգին։
Նա ըզմեզ ոչ թողուլ հայցէր »։

Իսկ 'ի վերջ վանկից՝ որ ը ձայնաւորաւ բաղկանան՝ բաժանել անդամ, ոչ միայն խորթ է և անարուեստ՝ այլ և վրիպակ մեծ և ոչ ուրեք երբէք գտանի առ նախնիս։ Նա պատճառն յայտնի իսկ է. զի ոչ երբէք վանկն այն ընդունակ է շեշտի. վասն որոյ բաժանելի է ըստ Շնորհալւոյն

« Բամեալ 'ի քերբս տարրապէս։
Որպէս ըզտիպսըն բիբ ակին։
Նրրորդութեանըն միաբուն։
Յորժամ մարմնովըն մերունակ։
Արեամբ և ջրովըն զիս լուա»։

## ԴԱՍ Բ

### Զափ անդամոց և տողից։

Հ. Իցեն ինչ սահմանեալ թիւք վանկից անդամոցն և տողից.

Պ. Թիւք վանկից միոյ միոյ 'ի տողից գտանին առ նախնիս մեր 'ի հնգէ մինչև ցվեշտասան 'ի կիր արկեալ։ Հինգտանեանն չբաժանի սովորաբար յանդամս. զոր օրինակ

«Ի քէն տէր հայցեմ
Ի մարդասիրէդ
Ինձ բրժշկութիւն.
Լեր կեանք մեռելոյս,
Լոյս խաւարելոյս
Լուծանող ցաւոյս»։

Իսկ զայլոցն անդամս ազատ է քերթողն հատանել ըստ կամի և ըստ ճարտարութեան իւրում յազգս ազգս գեղայարմար ներդաշնակութեանց։ Սովորաբար 'ի հաւասար անդամս բաժանին որք մարթինն. զոր օրինակ

«Ոչ կարօտի | աշխարհս առ տիւ | արեգական,
Եւ կամ լուսին | ուաստեղք 'ի լոյս | գիշերական,
Յորժամ ծագէ | լոյսն անմատոյց | աստուածութեան»։

Բայց և անհաւասար անդամոց բազում են օրինակք 'ի նախնեաց. զոր օրինակ նոյն ինքն Շնորհալի զնոյնաչափ տողս բաժանէ այսպէս.

«Ի գաւազանէն | Յեսեայ | ստեղնեալ Ստեփանոս,
Առաջին պըտուղ | ծառոյն | որ 'ի Դաղդոթա.
Երփնազարդ պըճնեալ | գեղով | նըման հրեշտակի,

Բուրուան ոսկեղէն | խընկոց | զհոտ
անոյշ բուրեալ.
Նշոյց աստիճան | զորձեալ | զհար-
կանող քարինս,
Ընդ ինքեան հանեալ | զբազումս |
յերկնային խորանս »։

Հ. Ի թիւս վանկից անդամոցն իցէ՞
ինչ ազատութիւն քերթողին.

Պ. Այո, քերթողք մեր երբեմն զատ-
ղից ոմանց զառաջին անդամս միով կամ
երկուք և աւելի ևս վանկիւ պակաս առ-
նեն, և ընուն զթերի չափոյն կամ զամա-
նակին՝ երկարելով զձայնաւորն, մանա-
ւանդ 'ի հրամայական բայս, 'ի կոչական
անուանս, 'ի միջարկութիւնս, կամ ուր
ուրեք զօրաւորագոյն անկանի շեշտ. զոր
օրինակ

«Ողբացէք եկեղեցիք,
Հարսունք վերին առագաստի։ —
Ոչն տաս չէ՛ բանի սկըսուած,
Այլ ակամայ բըռնաբռնուած։ —
Բարձրացուցէք ըզտէր Աստուած մեր
միաբան,
Արդարոչն յառաջ ձայնեալ տայ ձեզ
հրաման։ —
Դուք որդիք նոր Սիոնի նորոյ ծնընդեան,
Օրհներգութեամբ պատուել ըզսա էք
պարտական։ —

Բանզի ոչ նայիմք 'ի սոսկ փայտ եղա-
կան,
Այլ որ 'ի սա է Բանն անեղ մեզյան-
դիման։ —
Տիմոթէոս որդեակ լեցիս 'ի խրախու-
թեան,
Ընամօթքարող խաչինվըկայութեան։—
Բարձրագոչ ձայնիւ զոչէր տէրն 'ի
խաչին »։

Հ. Հարկ եղէ անդամոց ամենայն տո-
ղից զոլ հաւասարաթիւ.

Պ. Ոչ. այլ վայելուչ և կարևոր ազա-
տութիւն է քերթողին շարախառնել տողս
այլաչափս 'ի քնարական քերթութիւնս,
որպէս և առ 'ի նախնեաց մերոց բաղումք
են մեզ օրինակք.

Եօթնոտանեան և տասնոտանեան խառն։

7. « Համբառնալով զաչըս մեր,
7. Կարդամք առ քեզ մարդասէր,
10. Որ յահեղակերպ աթոռըդ նըստիս։
7. « Ընդ հովանեաւ աջոյ քո
7. Պահեա զըմեզ բազմադութ,
10. Որ յանմարմնական զօրացըդ զո-
վիս »։

Եօթնոտանեան, ութոտանեան և վեցոտանեան խառն։

7. « Ահաւոր ես թագաւոր,
8. Քրովբէական ձայնիւ օրհնեալ,
6. Ի յերկինս 'ի յերկրի
8. Եւ յամենայն ժամանակի։
7. « Ահաւոր ես թագաւոր,
8. Որ նորոգես զքո զարարածս.
6. Հաստատես 'ի հաւատս,
8. Ի զիտութիւն Ճշմարտութեան »։

Եօթնոտանեան և վեցոտանեան խառն։

7. « Առաւօտեան սուրբ կանայքն
7. Հանդերձ իւղովք և խընկովք
7. Եկին 'ի սուրբ գերեզմանն,
7. Եւ ողբալով խընդրէին
6. Զանմահ փառայ թագաւորն։
7. « Ստուածասէր սուրբ կանայք,
7. Փութացարուք հետևեալ,
7. Պատմող լինել Պետրոսի
7. Եւ Յովհաննու սիրելւոյ,
6. Յարեաւ փառայ թագաւորն »։

Ըստ այսմ օրինակի մարթ է քերթող լինել զամենայն խառնս ներդաշնակաւորս յօրինել յաղագի ազգի այլաչափ տողից։

## ԴԱՍ Գ

### Յանգ տողից։

Հ. Օրէն իցէ առանց հանդստի իմաստիցն աւարտել զտողս.

Պ. Սովորաբար ոչ է օրէն սկսանել իմաստ ինչ 'ի միում տողի, և աւարտել զայն 'ի միւսումն, և մանաւանդ 'ի մասին ինչ միւսոյն, այլ 'ի յանդս տողից զհանդիստ իմաստիցն պատկանել. զոր օրինակ

« Ասահեալ սրբբոցըն լուսավառ,
Զնասցեն յերկինս 'ի տունն անճառ.
Այս միջակին է խրատ մարդոյս,
Յորժամ շարժի ախտիցըն բոյս ». Շնորհ։

Բայց մարթ է հանճարով և ճարտարութեամբ զհակառակն ևս վայելչապէս 'ի կիր արկանել, շարայարելով առանց հանդրստեան զտողս ընդ իրեարս, որպէս ուրեք ուրեք առնէ Շնորհալի.

« Նու ոչ յերկրորդ կամ յերրորդին
Պահու, սպասեմ դալոյ քոյին։ —
Նրկրրպագեալ յանմարմնական
Օրացն, ընդ Հօր և սուրբ Հոգին։ —
Ոստ լի ամաց քոյ երեսնից
Դրեցան և տունքըս դովեստից
Ի հիւանդոտ և ցաւալից

Ընձնէ, յաւուրքս քառասնից։ —
Նրուսաղէմ քաղաք մեծի
Թագաւորին երկնաւորի։ —
Ի ՅԱրգարէ թագաւորէ
Ասցուցց՝ շինեալ ես լինէի։ —
Թէ չիք հընար 'ի փորձանաց՝ որ մարդոյ գան՝
Փորկիլ ումեք, քան աղօթիւքըն մաքրական։ —
Բարձրագոչ ձայնիւ գոչէր տէրն 'ի խաչին
Օէլիէլին, և աւանդէր առ Հայր զՀոգին։ —
Ամլ և ըզծանր և ըզնրսեմ կիրս մարմնական
Նդեալ 'ի բաց, թուիցուք այսօր յերկնից կայան։ —
Տէր իմ, ընդէր վէրք 'ի քո ձեռս անպարտական ...
Պատասխանէ. Յիմ սիրելեացն 'ի Հրէաստան
Նս ընկալայ, և զայս պահեմ 'ի յապագայն»։
Հ. Օ՞ինչ է յանդն.
Պ. Ասնաւերջութիւն երկուց կամ բաղում տողից ոտանաւորաց։
Հ. Օրէն լցէ անյանդ յօրինել տաղս.
Պ. Նս կարի իսկ քաջ, մանաւանդ առ

մեկ, զի ոտանաւոր մեր և առանց յանգիցն իսկ նմանութեան զանազանի բաւականապէս 'ի հետևակ բանէ։ Ա. այս և 'ի շարականս մեր և այլուր բազումք են օրինակք. զոր օրինակ

« Ցորահրաշ պըսակաւոր
Ցու զօրազլուխ առաքինեաց,
Վարեցար զինու Հոգւոյն
Ընդդէմ մահու.
Վարդան քաջ նահատակ,
Որ վանեցեր ըզթըշնամին,
Վարդագոյն արեամբըդ քով
Պըսակեցեր զեկեղեցի »։

Ուր, որպէս քաջ տեսանի, ներդաշնակութիւն մեծ առանց յանգիցն նմանութեան յօրինէ քերթողն որպէս և յամենայն տաղին։ Բայց գեղեցկութիւն մեծ և առաւելագոյն յայժ ներդաշնակութիւն յօրինեն յանգք, մանաւանդ Ճարտարութեամբ և ըստ կանոնաց 'ի կիր առեալ։

Հ. Ո՞ր իցեն կանոնք յանգիցն նմանութեան.

Պ. Ցթէ 'ի պարզ ձայնաւոր յանգիցի տողն, այն ևեթ ձայն բաւական է. զոր օրինակ

« Ո՞ւր են գահոյք թագաւորի
Վաղարշապատ քո քաղաքի.
Կամ նախարարքն ուր արքայի,

Ընդարատեանդը գաւառի.
Ո՞ւր զօրականքն յասպարիզի
Կամ լեզէոնքն 'ի ճակատի.
Ո՞ւր մեծամեծքն 'ի բազմոցի,
Կամ ո՞ւր սեղանն ամենալի » . Ընդհ :

Բայց լաւ ևս յօրինի յանգն և ճոխ, եթէ գէթ և նախադաս բաղաձայնն՝ որ զվերջին վանկն գործէ՝ նոյն իցէ կամ լծորդ. զոր օրինակ

« Որ քեզ հասին յայնքմ վայրի
Բոլոր ամէն մասունք չարի : —
Վասն իմ 'ի լայ նիստ ւ 'ի սրդի,
Շարժեա 'ի յողբ զամէն հոգի : —
Լն էապէս մեզ քարոզէ
Օ՞Որէնն ուսեալ 'ի Մովսիսէ » :

Իսկ եթէ 'ի բաղաձայն յանգիցի տողն, հարկ է զի նախադաս ձայնաւորի նոյն իցէ ամենևին, և բաղաձայնն՝ որ զկնի՝ կամ նոյն և կամ գէթ լծորդ. ապա թէ ոչ, չէ բաւական: Լաւ ևս և ճոխագոյն՝ գործի յանգն, եթէ բաղաձայնն ևս՝ որ յառաջէ քան զձայնաւորն զայն՝ իցէ նոյն կամ լծորդ, այսինքն եթէ վերջին վանկն ողջոյն նոյն իցէ. զոր օրինակ

« Շրջին կոծով գնացողքն դարշ ,
Կապար մեղացն անկցին 'ի քարշ : —
Հանդչել ասէ 'ի չար ախտէն,
Ծանիր թէ մերձ է որ դատէն : —

Նորոգ, ասէ, երիտասարդ
Զիմաստութիւն զգեցիր քեզ զարդ։—
Պատուցանէ քեզ օրինակ
Որոս 'ի մանկանց բարեաց ունակ,
Զ Դանիէլ մանուկ յրստակ,
Որ և ցանկայր նրմա հրեշտակ »։

Համառօտ ասել, որչափ առատագոյնք իցեն նոյնատառք յանգից, այնչափ ևս առաւել գեղեցիկ է յանգն. որպէս զի եթէ կրկին վանկք 'ի յանդս դիպեսցին նմանք, ախորժելի յոյժ գործի ներդաշնակութիւն. զոր օրինակ

« Լիւն լուր, ասէ, հօր քո խրատու,
Յորմէ շահիս բան լուսատու։—
Նու թէ մրտաք ես բութ և դուլ,
Ջանիս զիմաստրս կեր և կուլ։—
Լուր և անսա իմում բանիս,
Նշանելի և մեծ լինիս
Նթէ զերկիւղ տեառն ուսանիս։—
Նրմանաբար խորհուրդ խորին
Յայտնէ և միւս անուն նորին։—
Արժէ 'ի բաց զախտրս տարտամ,
Գործով բարեաց առնէ փարթամ»։

---

## ԴԱՍ Դ

Հ. Խիստ թուի այդքան երկիւղածութիւն 'ի յանգս, ուր Շնորհալին մեր քաջ տաղաչափ'ի զեղեցկագոյն տաղս իւր 'ի յանդ ածէ զբառքս որն ընդ ջրաւոր, սակրընդ գերակայ, անէրէ ընդ անպարէրէր, այլոլ քրն հանդերձ. զոր օրինակ

« Որպէս զայդի մեծ տաշտաւոր. . .
Կամ բարունակ ողկուզաւոր,
Իբր 'ի յանկեան տունկ սորեկ որթ
Տեղւոջ պարարտ և զօրաւոր։—
Թէ և մեռայք այժմ 'ի մարմնի,
Կեանք առ Քրիստոս ծածեալ ունիք։—
Եւ այս 'ի յամն էր ոչ սակաւ
Այլ քառասուն կամ զերակայ։ —
Այս զաւանսրն պարագայ,
Որ շուրջ զինև կային 'ի ճահ,
Աւերեցին և քանդեցին,
Հողաբլուր թողին զնոսա։ —
Այլ անվախճան է և անեռք
Եւ յաւիտեան անպարարեր։ —
Ընդաղթելի սուրբ զօրութիւնք
Ի յարարչին փառատրութիւն »։

Պ. Վ ԷՐ 'ի վերոյ հայեցեալ 'ի տողսդ, թուի ապատութեամբ վարեալ քերթողին. այլ յընթեռնուլն զնոսա ուշիւ, կատա-

բեալ նոյնայանգութիւն ազգի լսելեաց։ Քանզի յառաջնումն թ ոչ բառին խառնեալ ընդ յաջորդ տիւնն՝ մնայ ոչ. յերկրորդումն 'ի մարմնի զկնի ունելով զկ բառին կնոջ, գործէ ընդ նմա զյանգս էկ նոյն ընդ է։ իսկ յերրորդումն, 'ի չորորդումն և 'ի հինգերորդումն տառքս ա, հ, բ, ի, կցին ընդ ձայնաւորս յաջորդ տողիցն, և մնան յանգքն նմանաձայն։

Ապաքէն երևի ուրեք ուրեք և առ նախնի քերթողս մեր կարի իմն աղաւաւթեամբ զանբաղազոյգս 'ի յանգից 'ի մի լծորդել. որպէս աւ ընդ աւ, էւ ընդ էր, աւդ ընդ աւ, աս ընդ այս, ոնյ ընդ ոնրդ, ոնդ, ոս ընդ ոյ, որ ընդ որ. և այլ այսպիսիք. բայց այսոքիկ չեն հետևելի, այլ մանաւանդ զգուշալի են, բայց 'ի լծորդ տառից՝ որ վայելչապէս կազմեն զնմանաձայնութիւն յանգից. զոր օրինակ

«Լայեաց և տես, ասէ, զՅովսէփ
Ընդհրեշտակաց նըմանն 'ի դէպ։
Ում թէ սրբաւ լինիս 'ի յոյզ
Նու տաս աճել իբրև ըզսոյս,
Հոգիդ մաքուր պահէ և լոյս։ —
Զի մի կրեսցես զոր ասաց տէր,
Ոտանջելն 'ի հուրն մահաբեր։ —
Ճէն ճառագայթ առ 'ի սրբոյդ.
Ասէ, ծագեա լուսոյ հանդէս։ —

Եկեղեցիսըն խաւարած
Յայնժամ վառի լոյս կանթեղաց։—
Մէր աշխարհիս այս ախտաշարժ
Ատել խրատէ զաղտեղի գարշ »։

Այսպիսի յանդք կազմեալք 'ի ԼԾորդաց գեղեցիկք են, որպէս ազդումն իսկ լսելեաց վկայէ։

Հ. Եցէ՞ ինչ այլ նկատելի 'ի յանդս բաց 'ի նմանաձայնութենէ։

Պ. Այո ամենևին. զի թէպէտ և ամենևին նմանաձայնք իցեն, այլ ոչ այնպէս զուարճացուցանեն զմիտս՝ եթէ իցեն նոյն մասունք բանի նոյնահոլովք, կամ յար և նման միմեանց ածանցեալք. զի ոչ է ճարտարութիւն քերթողի յօրինել տողս հանգոյն այսոցիկ.

« Օքանս բարիս հեղ 'ի լեզուէդ,
Օողորմութիւն 'ի ձեռանէդ։—
Մինչդեռ յիշեմ զօրն ահագին,
Եւ զառաւօտն մրթագին։—
Որպէս այգի մեծ տաշտաւոր
Կամ բարունակ ոգկուզաւոր։—
Զայնս ահագինըս հընչէին,
Մինչ զի զերկիր դղրդէին
Մի՛ տրրտմիցիք այլազգաբար,
Օերդ հեթանոս կամ հրէաբար »։

Օվ թէպէտ և գեղեցիկք են տողքս, այլ ոչ որպէս այլուր նոյն քերթող յայլ և

այլ մասանց բանի և յայլ և այլ հոլովոց յօ-
րինէ յանգս. զոր օրինակ

« Հայց և ծնողաց մեր հանգերձ քերբ
Լեցի յիշումն յաւուրն անեղբ։ —
Սա միջակին է խրատ մարդոյս,
Յորժամ շարժի ախտիցըն բոյս։ —
Բաբունական սիրոյն ամպար
Կացուցանէ անմիջաբար։ —
Մեծին ծագմամբ չփայլեն այլում,
Մինչ փայլակէ լոյսն անպատում։ —
Լայն ճանապարհըն հետևել
Տանի 'ի գուբ խորին և անել։ —
Սրմանաբար խորհուրդ խորին
Յայտնէ և միւս անուն նորին։ —
Սերոյ 'ի բաց լեր աշխարհիս,
Նա յԱստուծոյ սէրըն վառիս։
Ի ցասմանէ դու 'ի բաց լեր,
Նա մի ըզբանըս թունաբեր
Ընդ 'ի սրտէդ յառաջ բերեր։ —
Պերտուեայ տապանն, ասէ, զՄովսէս
Նա Յակովբայ զարմին հանդէս »։

Յայսմ ամենայնէ 'ի միա առնուլ է, զի տաղքն այնոքիկ միաձայնք յանգեալք ծայր 'ի ծայր 'ի սեռական անուանս խորանին, վէմին, Սիոնին, նոցին, կիսակարանին, են, կամ 'ի բայս անկատարս պագնապէին, գնային, գուէին, երգային, հնչէին, դղրդէին, խիղախէին են, ձանձրալի են, թէպէտև 'ի քերթողաց

առաջնոց 'ի կիր առեալ. զի նոքին իսկ ուր առաւելագոյն ուշիւ և արուեստաբար տաղաչափել կամին, փոխեն զյանգս, և գեղեցկայօրէն կազմեն տաղս նախանձելիս քերթողաց։

Իսկ զնոյն բառս, կամ զբարդեալս 'ի նոցին բառից, կամ զբարդս ընդ արմատս իւրեանց յանգել, բնաւ և հակառակ է արուեստի. վասն որոյ ոչ են ըստ օրինի տողքս.

« Ծովուն հրաման Մովսէս քև տայ,
Բայց տէրըն քև խրախոյս մեզ տայ։—
Փոխի 'ի ցօղ զբարթարար,
Որ անյուսիցն է տրրտմարար։—
Օխմաստութիւն զկեցիր քեզ զարդ,
Մի զպատմուճանըս բազմազարդ։—
Որպէս այգի ողկուզալի,
Կամ ձիթենի պտղով 'ի լի »։

Բայց նոյն բառ ըստ ամենեին այլ և այլ նշանակութեան, կամ որոյ բարդութեամբ փոխեալ իցէ նշանակութիւն, և կամ բայ ընդ անուան՝ յորմէ ածանցեալն իցէ՝ կազմեսցէ զյանգ, ըստ արուեստի է. զոր օրինակ

« Թագաւորըն կամարար,
Որ զՄարեմանն ուրախ արար։—
Օր մերկ յայտնեաց զայն միածին Որ
դին և բան,

Ամրդ ժողովուրդ սաղտասփեսցիս՝ ը-
ւեալ գայս բան։ —
Բամեալ 'ի քերբս տարրասէս
Սուրբ հոգևոր բանքս պէտպէս »։

## ԳԱՍ Ե

Քանակ բառից։

Հ. Օ՞ինչ է, և ո՞րպէս չափի քանակ բառից.

Պ. Քանակ բառից է երկարութիւն և սղութիւն ը ձայնաւորի, յորմէ չափի թիւ վանկից։ Օ՞յ ուր երկարի սա 'ի մէջ բաղաձայնիչ, վանկ գործէ. իսկ ուր սղի, չհամարի 'ի վանկ. վասն որոյ մի 'ի կարևորագոյն հմտութեանց տաղաչափին է գիտել՝ ուր ձայնաւորս այս սղի կամ երկարի, և ուր տղատ է առ երկաքանչիւրսն։

Ամրդ ըստ գեղեցիկ կշռութեան չափուց Շնորհալւոյն, ուր 'ի վերջս բառից գկնի բաղաձայնի յաջորդէ « գիմորոշ կամ յորնակի, չսղի՝ եթէ ոչ գՀետ գայցէ ձայնաւոր՝ կամ տառքս յ, հ։ Այլ եթէ բաղաձայնն նախադաս « տառին՝ իցէ մի 'ի նայիցս ն, ր, ռ, ղ, լ, մ, մարթի սղել և առաջի բաղաձայնի, մանաւանդ եթէ նայ իցէ և

բաղաձայնն այն յաջորդ։ Այս ամենայն երևի յօրինակաց.

« Ընդ սանդղաձև բանըս քոյին։
Օանկեալս 'ի մեղս անդընդային։
Դրանեցեր զորս 'ի բարին։
Ո դրունս լուսոյ առաւօտիդ։
Մինչ 'ի յականջս հընչեալ ուժգին »։

Օսոյն է իմանալ և վասն դիմորոշին ը. որ չգրի՝ թէ չյաջորդէ ձայնաւոր. իսկ ղկնի միոյ նայ տառի մարթի սղել զոր օրինակ.

« Օներ ոգ բնութիւնըդ շարժեցին։
Յորդեգրութիւն Հօրըդ վերին։
Ընտանական ազգ երկնային։
Քանզի ըզտէրդ իւրեանց տեսին։
Ըզքեզ որ զանձդ ես երկնային։
Օնորս ուսուցեր բանդ 'ի մարմին։
Բացեր զբերանդ աստուածային։
Այլ որ ներստիսդ յերկնից երկին »։

Իսկ եթէ սղերովն գուցէ վասանդ շփոթելոյ ընդ այլ բառս՝ չգրի. որպէս մարթին շփոթիլ բանըդ, ջանըդ, մարըդ, ընդ բանդ, ջանդ, մարդ։ Օայս շփոթումն բառից ըստ տեղւոյն դիտելի է և 'ի ա և ն որպէս մարթին շփոթիլ վարս, պարս, ղարս, բարձն, ուղն ընդ վարս, պարս, ղարս, բարձն, ուն։

Հ. Օիարդ փոփոխէ զքանակ բառից տալուս կամ նախդիրս ը.

Պ. Ընդ բաղաձայնս, մանաւանդ բաղմավանկ բառից, սղի սովորաբար՝ եթէ նախադաս բառն յանդի 'ի ձայնաւոր. զոր օրինակ

« Լուսաւորեա զխաւարս անձին։
Օ՛ի զթագաւորդ ընդունիցին։
Օ՛ի զգուշացայց աւազակին։
Ինձ պարգևեա զքեզ ձիր շնորհի »։

Իսկ եթէ նախադաս բառն յանդի 'ի բաղաձայն, աղատ է 'ի սղել կամ" ի վանկ կազմել։ Օ՛նոյն է ասել և ևս, եթէ ղ բնական իցէ. զոր օրինակ

« Կոչել զգրացիս դերաշխարհին։
Օ՛ի կատարեալ էառ զընութիւն։
Կարդոս.քրքրում զմուռ ընդ հալուին։—
Օ՛գեստ արկանէ տղայոց բեհեզ,
Օ՛հնազանդ լինելոն հօր և հեզ »։

Բայց ընդ միավանկ բառս, և յորժամ ղկնի ունիցի կրկին բաղաձայն սղելի, սովորաբար չսղի, եթէ ոչ միավանկիցն սկզբնատառք իցեն, կամ հ. զոր օրինակ

« Ծածկեալ ըզգլուխդ կրուփէին։
Գեր 'ի վերոյ քան ըզբնութիւնս։
Նշ տաս աճել իբրև ըզբոյս։
Պերժել ըզչարն ատելութեամբ,
Գրրկել զբարին սիրելութեամբ։—
Նշ ըզնապարծ բան յիմարին »։

Ուրեք ուրեք չսղի և ընդ ձայնաւորի. զբ

« Ընտու ըզթագն և զդաւազան ։
Հիւսէ ըզմեզ ընդ նոյն սիրով ։
Իսրատէ ըզքեզ մի յաչաղել ։
Կամ պետութիւն իշխանական
Թէ ընկալցիս դու ըզմարդկան » ։

Բայց հասարակաբար գիտելի է, զի ուր ուրեք ազատ իցէ ամենևին սղելն կամ երկարել, լաւ է երկարելն քան զսղել. զի որովհետև բաղաձայնք լեզուիս յոլովք են, պարտ է քերթողին զգուշանալ 'ի յաճախելոյ և ևս զնոսին, զի մի դժուարալուր լիցին տաղքն լսելեաց ։

## ԴԱՍ Զ

Նայ տառք. — Զուգադրութիւնք բաղաձայնից ։

Հ. Օրինչ կանոնք իցեն երկարելոյ և սղելոյ ը ձայնաւորի առաջի նայ բաղաձայնից.

Պ. Յորժամ նայ բաղաձայնքս Ն, Ր, Ռ, Ղ, Ղ, Ղ, Հանդիպին 'ի սկիզբն բառից զկնի այլոց նայ կամ թաւ բաղաձայնից, որպէս ԲՆ, ԲՐ, ԳՆ, ԳՐ, ԳԼ, ԴՐ, ԼՌ, ԽՐ, ՀՐ, ՀՆ, ՀՐ, ՁՆ, ՄՆ, ՄՐ, ՓՆ, ՓՂ, ՍՂ, ՎՐ, ՏՆ, ՏՐ, ՆՐ, ՐՐ, սովորաբար սղին. զոր օրինակ

« Վ ջրիպեաց մնապարծ իւրով բանիւ ։

Զինչ յանբնականն որ ախտասցին ։
Զեղէ նմանող քում ծառային » ։

Բայց եթէ յաջորդ ձայնաւորն իցէ երկ-բարբառս ու-ա , ու-է , ու-ի , ոչ ևս սղի. զոր օրինակ

« Ամլ իբրը ճրագ ընդ գրրուանին ։
Ազգրրդուութիւն կրուասիրին » ։

Իսկ 'ի միավանկ բառս եթէ ունիցին ղ կամ 'ղ նախդիր, յայնժամ սղին սովորաբար. ապա թէ ոչ, կարեն լինել երկար կամ սուղ ըստ փափկութեան կամ թանձրութեան նախադաս վանկին։ Զի եթէ նախադաս վանկն իցէ թաւ ինչ կամ խիստ, չսղին. իսկ եթէ պարզ իցէ ձայնաւոր կամ յանգեալ 'ի բաղաձայնքս ն, ր, մ, հ, յ, ղ, մարթին սղել։ Նոյնպէս եթէ նախադաս բաղաձայնն իցէ նոյն ընդ սկզբնատառ սղելի բառին. զոր օրինակ

« Նու ոչ տրհաս տրղայն 'ի նմին ։
Որք անագան գրնել գնացին ։
Պահանջեցեր զկնի նորին ։
Ծածկեալ ըզգլուխըդ կրուփէին ։
Զի հնար լիցի ոգւոյս ստորին ։
Մի արտաքոյ մնար հեղգութեամբ ։
Խորասուզեալ մանկանցն 'ի յուխ
Խրատ ընծայէ սա հոգեբուխ » ։

Հ. Զինչ ապա եթէ 'ի վերջին վանկ բառից դիպիցին նայ տառքդ.

Պ. Ի յառաջել նայիցն՝ զկնի ունելով

զայլ բաղաձայնս , սղին . որպէս բանք , գոնդ , զարդ , արբ , կեղտ , ամբ , պոնգ , էլ , ևն ։ Իսկ 'ի հետևել նայիցն՝ յառաջոյ ունելով զայլ բաղաձայնս, ոչ սղին՝ եթէ չյաջորդեսցէ անմիջաբար ձայնաւոր, կամ տառքս յ , ւ . զոր օրինակ

« Յօղէր արտասուքը ցաւագին
Մայր տեառն՝ որ կայր մերձ առ խաչին։—
Բայց ինքն ինքեան անտեսանայ ։
Եւ ինքըն գուլ և ոչ սրանայ ։ —
Դուռըն բանայ քեզ գիտութեան ։
Եւ հրէական ազգըն կոծին ։
Բ գչափ մեղացն որով ստեցին ։ —
Նրբեմն էապ մեք ըղձալի ,
Բայց այժմ եղաք յոյժ եղկելի ։—
Ա յլ մատն եղէ անձամբ անձին ։
Որք զեկն յառաջ պատրաստեցին » ։

Եթէ զկնի վերջին նայիցն կայցէ դիմորոշ ինչ ա , ե , ն , նայքն սղին , և դիմորոշքն ոչ . որպէս այծմը , համբեր , ձեռնը , ապաղը . զոր օրինակ .

« Բախեմ ըզդուռնըդ երկնային ։
Բուռըն հարիցս տեառնըդ ոտին » ։

Հ. Լցեն և այլ զուգադրութիւնք բաղաձայնից սղելիք .

Գ. Սղին սովորաբար և բառք , որոց սկզբնատառք իցեն սպ , ստ , սկ , սպ , սբ , սգ , սխ , կպ , գս , ֆս . զոր օրինակ

« Լուսոյ սկսաւ ասէ ստեղծուած : —
Մի դատեցայց ընդ սպանողին,
Ընդ փայլականին ստորանկին : —
Կտաւոց մահուն մարմնապատար :
Օքան հին և նոր կտակարանին :
Սխալեաց կամաւ 'ի յերկրորդին » :

Բայց այսոքիկ 'ի միավանկս ոչ սղին, եթէ անմիջապէս չիցէ նախադաս ձայնաւորինչ կամ նայ և կամ բաղաձայն ինչ նոյն ընդ սկզբնատառ սղելի բառին. զոր օրինակ

« Քանզի է սկիզբն իմաստութեան :
Նուքսակըն հին փոփոխեացին » :

Այսպէս և բառքս կբպակ, պբոակ, բոէթ-ռ, և՛ն, սղին 'ի կբպակ, 'ի պոակ, 'ի ռէթ-ռ, 'ի ռպոս, և այլն :

Ի զուգադրութեանց աստի այնոքիկ՝ որ 'ի սկիզբն իւրեանց ընդունին զձայնաւորն ը, եթէ զկնի երկուց բաղաձայնիցն յաւելցի միւս ևս նայ՝ տակաւին սղին. զոր օրինակ 'ի ռպնանէլ, 'ի ռպրռ-կ, և՛ն : Իսկ եթէ զձայնաւորն ը ոչ 'ի սկիզբն՝ այլ 'ի մէջ երկուց բաղաձայնիցն ընդունին, ոչ սղին. զոր օրինակ կբպրռպէլ, ռբնրաէ, և այլն :

Այսպէս և այլ ամենայն զուգադրութիւնք երից բաղաձայնից ոչ սղին, և պահանջեն զձայնաւորն ը :

Իսկ զուգադրութիւն կրկին թաւ բաղաձայնից 'ի սկիզբն բառի ոչ սղի, բայց եթէ նախադաս տառն իցէ ձայնաւոր կամ նայ՝ ընդ որ հեշտեաւ կցեսցի մին 'ի բաղաձայնից անտի. որպէս 'ի Վայոց-Ձորն, 'ի Մպանել, 'ի Հիսուս Ղենոց, 'ի Դիոնոց, 'ի Գրէր, յիմանալի Վրաց. զոր օրինակ

« Ամլագարութեան պտուղս առաջին։
Մինչև քակել շտեմարանին։
Ի մարտ մրտելն ընդդէմ տկարին։
Շինեալ 'ի զիրկս իմ շքեղաւոր։
Նու վասըն թքոյն 'ի յիս զրթա »։

Ամլայոյժ զգուշութեամբ, և դուն ուրեք առ հարկի և եթ վարելի է ազատութեամբքս, զի գժուարինիսկ է անսայթաք հնչել զայնս.

## ԴԱՍ Է

Սղութիւն նախադրութեանցս Ընդ, Ըստ։
— Սղութիւն ձայնաւոր տառից։

Հ. Ո՞ր օրէն իցէ սղել զնախադրութիւնքս Ընդ և Ըստ.

Պ. Ընդ միայն, ուր առաջի կամ զկնի ունիցին ձայնաւոր. զոր օրինակ

« Օ՛յ ը՛նդ փեսայիդ 'ի յառագաստ։
Ը՛նդ առաջնորդա թըրչիս ամպով։
Դարձեալ ասեմք ը՛ստ անառակին։

Ը՞ստ արարչութեան երէց որդին » :
Կայ սղեալ և առ և մատուիք, զոր օրինակ
« Ը՞ստ հոգւոյն շնորհացն եօթնարփին։
Ընդ մարմին ը՞ստ մերոյ բնութեան :
Սիւն՝ յոր ը՞նդ հանուրըս հաստատեալ»։
Օրոս առ հասարակ գրելի է ըստ նախ-
նեաց այսպէս.
« Օ՛ի 'նդ փեսայիդ 'ի յառագաստ :
'Ղ՝ առաջնորդա թըռչիս ամպով։
Դարձեալ ասեմք 'ստ անառակին :
'Ստ արարչութեան երէց որդին :
'Ստ հոգւոյն շնորհացն եօթնարփին։
Ընդ մարմին 'ստ մերոյ բնութեան :
Սիւն՝ յոր 'դ հանուրըս հաստատեալ » :
Հ. Բաց 'ի ձայնաւորէս ը, մարթի՞ սղել
երբէք զայլ ձայնաւորս .
Գ. Ստագիտարոս և Շնորհալին երկա-
վանկ առնեն զ Ա՞մո՞-էլ. երևի և այլ ուրեք
ուրեք ազատութեամբ այսուիկ վարեցեալ
նախնեաց , զ Կ՞ե՞ռ՞ր՞ռ՞ եռավանկ առնելով,
և զ Հ՞ոյ՞ալ երկավանկ. և այլն։ Բայց ըստ
օրինի երկբարբառքս ո՞-ա, ո՞-է , ո՞-ի , 'ի բաղ-
մավանկ բառս սղին . զոր օրինակ ը՞-՞ան՞ալ,
ը՞-՞ա՞ր՞ռ՞-ն , ն՞ո՞-՞ա՞գ՞է՞ լ , ը՞-՞ա՞ր՞ճ՞ան՞ալ։ Իսկ յորս
չկիք այլ վանկ բաց 'ի գոյանէ , և ոչ նախ-
դիր երկավանկ վարին սովորաբար՝ փո-
խելով զ՞ 'ի ը. զոր օրինակ ը՞-ա , ն՞-ա՞գ ,
դ՞-ա՞ր՞ռ՞, ղ՞-ա՞ր՞ճ՞, և այլն։

Դարձեալ և — կամ լոկ — եղեալ փոխանակ Ե-ի ընդ ձայնաւորս, միշտ սուղ է. զոր օրինակ

« Վ՚ատն իմ՚ի լաց նիստ ու՚ի սրգի,
Կականալիր ու ողորմելի։ —
Ո՞ւր են խընկոցն՚ի քեզ բուրմունք,
Ներևոյթ ւ երևելի »։

Կայ սղեալ և ընդ ՝ տառին. զոր օրինակ

« Ն՚ւ իմաստուն ւ յիմարեցայ։
Թ՚էպէտ ւ յերկինս հոգիքն ելին »։

Ն՚ ուրեք զի՚ի հանդիպել երկուց ձայնաւորաց, մանաւանդ նմանեաց, մին՚ի վերջ նախորդ բառի և միւսն՚ի սկիզբն յաջորդին, յապաւի մին՚ի նոցանէ կամ սղի. զոր օրինակ

« Ո՚ի մի՝ սոցունց արկցիս տապաստ։

Այսոքիկ են ընդհանուր կանոնք քանակի բառից մերոց։ Ապաքէն դտանին և այլ խոտորմունք ինչ և համարձակութիւնք քերթողականք. այլ զայս ամենայն սովորութիւն և կրթութիւն ուսուցանեն, և մանաւանդ զայն, թէ ո՛ր՚ի սոցանէ ընդունելի էցէ կիրթ ախորժակաց, և ո՛ր զգուշալի։

---

# ԴԱՍ Ը.

Հովուաբանութիւն. — Քնարերգակ քերթութիւն. — Նուագ. — Խրատական քերթութիւն. — Թուղթ. — Երգիծանութիւն. — Առակք։

Հ. Տուր ինձ համառօտիւ տեղեկութիւն զաղգի ազգի քերթութեանց. զինչ է հովուաբանութիւն.

Պ. Հովուական կենաց և դաշտային գեղեցկութեանց քերթողաբար նկարագրութիւն։ Ախորժելի է յոյժ քերթուածս. զի զնկարագիրս հովուաց և զմշակաց և զգեղջէից, զորոց զանմեղ և զանխռով կեանս նկարագրէ 'ի նմա քերթողն, բաղդատեալ մեր ընդ քաղաքականին՝ զուարճանամք։

Պարտ է քերթուածոյս այսմիկ գոլ պարզ և ամենևին անսեթևեթ. և դէպք 'ի սմա հոգեշարժք ուրախալիք և տրտմալանք վայելուչ յոյժ և զմայլելի գործեն զքերթուածն։

Թէոկրիտոս 'ի Յունաց, և Վիրգիլիոս 'ի Հռոմայեցւոց անուանիք եղեն յոյժ յայս ազգ քերթութեան, առաջնոյն յարքունիս Պտղոմեայ Եղբայրասիրի, և երկրորդին 'ի դրան Օգոստեայ կայսեր գրեալ զքերթուածն։

Հ. Օ՞ինչ է քնարերգականն քերթուԹիւն.

Պ. Այն՝ զոր քնարաւ կամ այլովք նուագարանօք մարԹ է երգել. և կոչի սա Տաղ կամ Գանձ։ ՔնարերգուԹիւն զամենայն այլևայլ գեղեցկուԹիւնս ազգի ազգի քերԹուԹեանց յինքն ժողովեալ՝ի վերայ այնոցիկ և զիւրն յաւելու յատուկ նկարագիրս. որ են խանդք։ Որ իբրև ազգի՝ի քերԹողն, ջերմանան միտքն, վառին ցնորքն, և ամենայն զօրուԹիւնք հոգւոյն զարԹուցեալ՝ օժանդակեն՝ի քաջքերԹողուԹիւն։ ՈւրԹ խմաստք ազնուականք և պերճք, և մարԹ խանդաղատելի և վայելուչ պատկերք ընդառաջ լինին. խմաստք բարոյականք վսեմք, վէպք քաջայարմարք, և դրուագք՝ գեղեցկագոյնք յոյժ քան զնիւԹ քերԹուԹեանն։ Բայց Թէպէտև ազատուԹիւն է քերԹողին՝ի սմա յիմաստից յիմաստս վազս առեալ անցանելոյ առաւել քան յայլ ամենայն քերԹուածս, սակայն ոչ առանց իրիք կցորդուԹեան. ապա ԹէՀ ոչ, զառանցելոյ բանք Թուեսցին և ոչ առն խոհականի։

Պինդարոս, քնարերգակ քերԹուԹեան հայր՝ի Յոյնս, զոմանս՝ի հեաւոդայ իւրոյ զառածեցոյց յայս ԹերուԹիւն։ Ովրատիոս հռոմայեցի զպինդարեան ԹոիչՀ

մտաց չափաւորեալ, գիտաց զկցորդութիւն իմաստից ընդ վսեմ գեղեցկութիւնս լծորդել։

Ազգ ինչ քնարերգական քերթութեան է և Նուագն անուանեալ, որ յերկուց քառատողից և յերկուց եռատող տանց բաղկանայ։ Բառ մի աւելորդ, և իմաստ ինչ օտարյառաջարկութենէն գրուագեալ յայն խանգարէ զգեղ նորա։

Չափաբերութեան ոտիցն պարտ է գոլ ունայթաք և դիւրասահ, և յանդիցն՝ յար և նման։ Նիւթոյն ամենևին մի ինչ, և ոճոյն՝ տակաւ զօրաւորագոյն, աւարտեալ յանակնկալ իմն և 'ի հանճարեղ իմաստս։

Խաղացուոյ է գիտ նուագս, և առ նոսա յաճախեալ յոյժ. այլ զձոխութիւնս այլոց ազգաց փոխաբերել 'ի մեզ՝ գովելի իսկ է։

Հ. Օ՞ինչ է խրատական քերթութիւն.

Պ. Որան զամենայն ազգս քերթութեան օգտակար. զի ձևով բանիցն և ևթ զանազանի 'ի բարոյական և յիմաստասիրական ճառից. և քաղցրութեամբ տաղաչափութեան և քերթողական լեզուին ախորժ և դիւրընկալ ընծայեցուցեալ զխրատն, և կենդանատիպ նկարագրութեամբք և պէսպէս գեղեցիկ դրուագօք

յափշտակէ և գրաւէ զմիտս ընթերցողաց, ազդողագոյն արարեալ նոցա զբանսն։

Յայս ազգ քերթուածեան պահանջի կարգ և ոճ, ոչ որպէս յարձակ ճառս՝ բայց դիւրըմբռնելի ընթերցողին։ Մշակականքն Վիրգիլեայ կատարեալ օրինակք են առ այս։

Թուղթք և երգիծաբանութիւնք, որ յուղղութիւն բարուց կարգին 'ի բնէ, խրատական քերթուածիւնք են և այնոքիկ, այլ ոչ զնոյն կանոնաւոր ճշգութիւն պահանջեն։ Բայց 'ի սոսա առաւելագոյն խնդրի համառօտութիւն 'ի պատուէրս։ Ճշգրիտ նկարագրութիւն բարուց և բնաւորութեանց, կարճառօտ պատմութիւնք և առասպելք և զուարճալի հանճարաբանութիւնք պատշաճագոյն գործեն զարդ յայս ազգ քերթուածեան, որք այլուր դուն ուրեք գտանեն տեղի։ Այսոցիկ ամենակատար օրինակք են Ովրատեայ թուղթքն և երգիծաբանութիւնք։

Դարձեալ և առակք կամ առասպելք խրատական քերթուածիւնք են. որք 'ի ձեռն կեղծ օրինակաց կենդանեաց և անշունչ իրաց հրահանգեն զմարդիկ։ Այսոպոս 'ի Յունաց անուանի քան զամենայն առակախօսս եկաց. և Փեդրոս զնորայսն 'ի լատին բարբառ այնպէս վայելուչ քերթեաց

հանդերձ յաւելուածով, զի ոչ ինչ ստորև քան զնա գտաւ։ Իսկ առ մեզ Մխիթարայ Գօշի առակքն վայելուչք են առաւելագոյն մասամբ ըստ գիւտիցն, և ըստ համառօտ ոճոյն։

## ԳԱՍ Թ

### Դիւցազներգակ քերթուածն։

Հ. Օ՞ինչ է դիւցազներգակ քերթուածն.

Պ. Դէպք ինչ մեծագործ քերթողաբար վիպագրեալ, առ 'ի սէր և 'ի զարմացումն առաքինութեան ձգելոյ զընթերցողս։

Որպէս զամենայն աղգս քերթուածոց և առաւելագոյն ևս դիւցազնականն պահանջէ միութիւն։ Բայց միութիւնս այս ոչ արտաքսէ զգրուագս, որ են յարակից դէպք, թէպէտև ոչ յոյժ կարևորք 'ի բովանդակութիւն առաջարկութեանն, այլ քաջ ընդ այնմ կցորդեալք։ Որպէս գրուագքն Կակոսի և Աֆիսոսի և Նուրիաղեայ Անէականն Վիրգիլիոսի։

Պարտ է դիւցազներգակ քերթողին զմեծ ինչ և զկարևորայ իրայ առնել վէպս արժանի քերթութեան և զարդուց։ Ա՛ր

այս կարևոր է և հնութիւն իրայն. զի նորք և արդի իրք՝ փոքունք թուին և անարդք. և քերթողին ոչ համարձակեալ յաճախել 'ի նմա կեղծիս, թուի ցամաք և անպաճոյճ. և յաւելեալքն իսկ կեղծիք ոչ միանան ընդ ճշմարտութեան, և չպատրեն զմիտս։

Պարտ է դարձեալ, զի ցանկալի լցեն վէպքն. առ որ մեծապէս օգնէ յաղգային իրաց առնուլ զայն, որպէս Հոմերոս և Վիրգիլիոս. և այնպէս ճարտար զգլխաւոր դիւցազնին յարդարել զնկարագիր, զի ընթերցողացն ոգիք կապեալ ընդ նմա յամենայն խոչս և 'ի վտանգս կարեկից լինիցին նմա։

Այս խոչք և վտանգք կազմեն զհանգոյց քերթութեան. և 'ի ճարտար մանուածն նոցա հաստատի արուեստ մեծ քերթողին։ Պարտ է նմա մօտալուտ և անճողոպրելի վտանգօք զարթուցանել զմիտս ընթերցողաց, տակաւ առաւելուլ զդժուարութիւնս և զվտանգս, և յերկար 'ի վարանս և յերկիւղի կալեալ զընթերցողս, ապա հաւատական դիպօք անսակնկալ լուծանել զկրնճիռն, և հանգուցանել զմիտս. նմին իրի և յաջողութեամբ պատշաճ թուի աւարտել զդիւցազնական քերթուածս, զի մի ընթերցողք աղետալի կատարածիւն 'ի սպառ ընկճեսցին տրտմութեամբ։

Նաքանզի վէպս Ճշմարտասիպս յօրինէ 'ի դիւցազնականին քերթողն, պարտի գիմաց իւրաքանչիւր որ 'ի նմա՝ տալ բնաւորութիւն և բարս սեփականս անյեղլիս և հանդուգնասիպս Ճշմարտին։ Ոչ է հարկ ամենեցուն նոցա առաքինիս զոլ և անստգիւտս բարուք, այլ և զդէմս ախտաւորս և զմոլիս մարթի ըստ պատշաճի 'ի ներքս մուծանել. բայց միայն զի աւադադոյնք և առաքինիք ևեթ 'ի նոցանէ սիրելիք իցեն։

Նա մանաւանդ զդիւցազնն՝ առաջնորդ իրացն՝ պարտ է ցուցանել մեծ և երևելի քան զայլս և զարմանալի առաքինութեամբ. որպէս Աքիլլէս և Ոդիսեւս 'ի քերթուածս Հոմերի, և Անէաս 'ի Վիրգիլեայն։

Ի դիւցազնականն քերթութիւն խատնին և հոգեղէն էակք, և 'ի Ճարտար խատնութեան նոցին է բարուք կազմածն՝ որ մեքենայն կոչի։ Բայց պարտ է քերթողին յայտնսիկ զչափ պահել, և մի հրաշս 'ի մտաց ստեղծանել. այլ զոր կրօնք և աւանդութիւն ընկալան, նոքօք ևեթ վարել. զի հաւանականք իցեն։

Ընդստին 'ի սկզբանէ պարտ է քերթողին և բացայայտ յանդիման առնել զաղաջարկութիւն իրացն, առանց մեծամծրս խոստանալոյ։ Որոյ դիւցազնականին անկ է զոլ վսեմ և ազդու, առանց ծեք-

ծեքանաց և արուեստակութեան. և կրից 'ի նմա ծանուցեալ զոլ, առանց քնքշանաց և թեթևութեան։

Արևելագոյնք 'ի գիւցազներգակ քերթողս են Հոմերոս և Վիրգիլ. և անսահմանելի յուզի վէճ, թէ ո՞'ի սոցանէ յերկոցունց գերազանցագոյն իցէ։

## ԴԱՍ Ժ

### Ողբերգութիւն. — Կատակերգութիւն։

Հ. Ո՞ինչ է ողբերգութիւն.

Պ. Ողբերգութիւն 'ի սկզբանէ առ Յոյնս էր երգ իմն 'ի հանդէս սպանդարամատական տօնին, յորում Նոխազ 'ի նուէր Դիոնիսի զոհէին. յորմէ Նոխազերգութիւն առ Յոյնս կոչեցաւ ողբերգութիւն։ Թէսպիս նախ իբր 536 ամաց նախ քան զԹուականութիւն փրկչին կացոյց զոմն 'ի պարն 'ի հանդիսատ երգեցողաց, պատմել զգիւցազին ուրուք վէպս։ Ապա Եսքիղոս 50 ամաց զկնի, երկուս ըստ միոյ կացոյց դերասանս 'ի պարն՝ խօսակցել ընդ միմեանս և վէպս ինչ ցանկալիս և ոգէշարժս ածել 'ի տեսիլ. և տախտակամած բարձրաշէն կառոյց խաղեալ, շուրջանակի պատշաճ նկարուք զարդարեալ. և ինքն նախ 'ի

յարդ և 'ի կերպարանս ած զթատրերգու-
թիւն, զոր ապա Սոփոկղ և Եւրիպիդէս
ածին 'ի կատարումն։

Ողբերգութեան անկ է կրթել զսիրտ՝
կարեկցութեամբ ընդ թշուառացեալս,
սիրով առ բարեբարոյս, և ատելութեամբ
առ չարս։ Սին իրի թէպէտ և մարթ է
քերթողին և հաւանական կեղծեօք շար-
ժել զսիրտ, այլ լաւ ևս յաջողէն պատ-
րանք. եթէ հիմն ինչ ճշմարտութեան իցէ
'ի վէպսն ծանուցեալ յամենեցունց։

Ապա հաւանականութիւն կարևորա-
գոյն մասն է 'ի վէպսն. և առ այս խըն-
դրին երրեակ միութիւնք, իրացն, տե-
ղւոյն և ժամանակի։

Առաւել քան 'ի դիւցազնականն պա-
հանջի 'ի սմա միութիւն. որպէս զի մի 'ի
սուղ ժամանակին 'ի բազումս զբաղեալ
միտք՝ չառցեն պարապ 'ի շարժել։ Բայց
հանդերձ միութեամբն մարթին յաճա-
խել 'ի նմա դէպք և դէմք, թէպէտ և
զդուշալի չխոկել յոյժ զայնս, զի մի բազ-
մաշփոթ խրթնութեամբ նուաղեսցի զօ-
րութիւն քերթուածոյն։

Ոչ միայն 'ի բովանդակ թատրերգու-
թեան պահանջի միութիւն, այլ և յարա-
բուածս իւրաքանչիւր՝ յորս վէպքն հատա-
նին։ Սովորաբար 'ի հինգ արարուածս

հատանին, այլ պարտ է քերթողին 'ի պատ-
շաճ տեղւոջ առնել զհատուածն, ուր 'ի
բնէ իսկ հատեալ իցեն վէպքն, և ուր մարթ
իցէ համարել բաղում ինչ 'ի միջոցի անդ
գործեալ՝ որոց չմարթի գործել 'ի թատերն։

Յառաջնում արարուածին պարտ է քեր-
թողին ցուցանել բացայայտ զորոց իրաց
իցէ ողբերգութիւնն, 'ի ցանկութիւն այ-
նոցիկ ածել զկացեալսն 'ի զնին, ծանօթս
տալ զդիմաց իւրաքանչիւր՝ որ անդր 'ի
ներքս մտանելոց իցեն, և զկրիս նոցա, և
զհանգամանաց անցիցն։

Յերկրորդ, յերրորդ և 'ի չորրորդ արա-
րուածս տակաւ պարտ է դժուարագոյն
զկնճիռն գործել, և յաճախել տակաւ զվա-
րանս 'ի տեսողս։

Իսկ 'ի հինգերորդումն պարտ է կերպա-
րանափոխ առնել զկրսն, և զհանգոյցն
լուծանել, յորում հանճար մեծ և ճարտա-
րութիւն քերթողին, զի իբրև ինքնին պար-
զեսցին իրքն։

Ոչ հարկ ողբերգութեան տխրու-
թեամբ աւարտել, այլ շատ է զի իցեն 'ինման
հոգք և անձկութիւնք և կարեկցութիւն
ընդ վիշտս առաքինեաց, թէպէտ և 'ի վախ-
ճանի յաջողեսցէ նոցա։ Այլ սովորաբար
անկ է ողբերգութեան տխրութիւն իմն
առաքինական թողուլ 'ի հոգւոջ։

Ա. միութիւն իրացն կարևոր է և տեսարանաց իւրաքանչիւր ընդ իրեարս ճարտար կցորդութիւն. զի չէ օրէն բնաւ դատարկանալ թատերն, խաղալկաց ամենեցուն ելանելով 'ի բաց, և այլոց 'ի տեղի նոցա փոխանակելով, տեսարան նոր և անկցորդ ընդ նախորդին բացեալ։ Այլ ոչ օրէն է ելումուտ դերասանաց առանց յայտնի պատճառի։

Ա. կատարեալ միութիւն իրացն պահանջի և ժամանակի և տեղւոյ միութիւն։ Արդ առ միութիւն ժամանակի հարկ է, զի որ ինչ յարարուածս իւրաքանչիւր կեղծին՝ չկարօտիցի առաւելագոյն ժամանակի քան զոր 'ի կեղծիս անդ անցանէ։ Բայց քանզի ընդ մէջ արարուածոց համարի միջոց ժամանակի առաւել կամ նուազ, մարթէ զժամանակ իրաց բովանդակ ողբերգութեանն սահմանել 'ի քսան և չորս ժամս։

Իսկ առ միութիւն տեղւոյ, շատ է 'ի նմին քաղաքի հաստատուն ունել զտեսարանն, այլ օրէն է տեղի 'ի տեղւոջէ փոփոխել զայն 'ի քաղաքի անդ, սովորաբար յաւարտ արարուածոցն։

Գլխաւոր դիմաց ողբերգութեան պարտ է ազնուականս դոլ և իշխանազունս, որպէս զի աղէտք նոցա ազդողագոյնք լցեն։ Բնաւորութիւնք նոցա մի բարեացն և մի

չարաց ծայրացեալք իցեն. զի միոյն ա-
մենևին տարապարտ վշտակրութիւն դրժ-
պըհի թուի, իսկ միւսոյն արժանահաստիշտ
ոչ ինչ արժանի կարեկցութեան։ Եղու-
կրից պարզ և անպաճոյճ է և առանց կարի
հանճարաբանութեանց. վասն որոյ զիմաս-
տըս բարոյականս չափով և ըստ պատշաճի
պարտ է 'ի կիր արկանել, և մի յաճախել
զայնոսիկ յանդէպս։

Հ. Ի՞նչ է կատակերգութիւն.

Պ. Ուարճաբար հրահանգել զտե-
սօղս, ծաղր կացուցանելով զմոլորութիւնս
և զախտս։ Այլ ոչ իրի վէպք 'ի սմա ոչ զա-
ւագաց արանց՝ այլ զհասարակաց կենաց
զանցս յանդիման առնեն։ Միութիւն իրի,
տեղւոյ և ժամանակի, և տեսարանաց
ընդ միմեանս անընդհատ կցորդութիւն, և
խաղեսեղն չմնալ դատարկ, և անձանցն
չելանել և չմտանել անպատճառ, և այլ ևս
կանոնք ողբերգութեան նոյնք և 'ի սմա
պահանջին։

Ամենայն ազգաց և ամենայն ժամանա-
կաց իրք մարթին 'ի դէպ գալ ողբերգու-
թեան, այլ ոչ և կատակերգութեան. զի
ախտք մեծամեծք և առաքինութիւն և
բոնագոյն կիրք նոյն են միշտ և անփոփոխ
յամենայն ազգս և 'ի ժամանակս. այլ թե-
րութիւնք մանունք հասարակաց կենաց՝

որ պատկանին կատակերգութեան՝ ըստ ազգաց և ըստ ժամանակաց փոփոխին, և ծաղրականք առ մին՝ ոչ նոյնպիսիք են։ Ոմին իրի որ հրահանգել կամի զազգ իւր, պարտի զախտս և զթերութիւնս ժամանակակցաց իւրոց համազգեաց նշաւակել 'ի թատեր։

Բայց զգուշալի է 'ի նկարագիրս բարոյ մի՛ քան զբնականն ստուարացուցանել զծաղրելին, այլ որպէս յամենայնի, հետևել և 'ի սմա բնականին։

Ընդ սովաւ բովանդակին և այլ ամենայն քերթածք ծաղրածուք ազգի ազգիք, զորոց առաջին օրինակն ետ Հոմերոս Ճակատամարտիւ մկանցն և զորտոց։ Այլ այսոցիկ ամենայնի, որպէս և այլոց բազում ազգի ազգի քերթուածեանց և տաղից մանրապատում Ճառք, քերթողական արուեստին վարժապետաց են անկ. ասատանօր այսքան տեղեկութիւն շատ լիցի համբակաց հռետորականին։

Հ. ԺՈՂՈՎՐԴԱՐԱՆ
Общественная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

# ՑԱՆԿ


Անդամք տաղաչափութեան . . . . 2
Առասպելք կամ առակք . . . . . 33
Դիւցազներգութիւն . . . . . 34
Երգիծանութիւն . . . . . 33
Երկարութիւն ը տառի . . . . . 23
Թուղթ . . . . . 33
Խրատական քերթութիւն . . . . 32
Կատակերգութիւն . . . . . 41
Հանգիստ տողից . . . . . 10
Հովուաբանութիւն . . . . . 30
Ցանգ տողից . . . . . 11
Նուագ . . . . . 32
Ողբերգութիւն . . . . . 37
Չափ ոտից կամ վանկից . . . . . 5
Սղութիւն ը տառի . . . . . 23
— Նայ տառից . . . . . 24
— Նախադրութեանցս ԸՆԴ ԸՍՓ . . 27
— Ձայնաւոր տառից . . . . . 28
— Այլ սղութիւնք . . . . . 25
Տաղաչափութիւն . . . . . 1
Քանակ բառից . . . . . 20
Քնարերգակ քերթութիւն . . . . 31